ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 42

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28-ը դեկտեմբերի 2019թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 27-ը, հրավիրված էին նաև ստորաբաժանումների ղեկավարները, մարզային ղեկավարությունը, ԵՊՀ ԻՄ-ի հիմնական շահակիցների ներկայացուցիչներ:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Մակարյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ի զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի (2018-2019 ուստարի) մասին տնօրենի հաշվետվություն: / Զեկուցող **Ա.Հ. Մակարյան** /
2. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2019թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին: / Զեկուցող **Ա.Հ. Մակարյան** /
3. ԵՊՀ ԻՄ-ի 2020թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին: / Զեկուցող **Ա.Հ. Մակարյան** /
4. Ընթացիկ հարցեր
   4.1. ԵՊՀ ԻՄ-ի արտաքին շահակիցների 2018-2019թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ: / Զեկուցող Է. Հ. Ղարայան /

4.2. Հաղորդում 2019թ.-ի բակալավրի ընդունելության արդյունքների մասին: / Զեկուցող Ա.Շ. Մարգարյան /

4.3. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի մասին / Զեկուցող Մ.Ս. Աթոյան /

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ միաձայն՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգի հարցերին անցնելուց առաջ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը ելույթի համար խոսքը տվեց Տավուշի մարզպետ **Հայկ Չոբանյանին:**

Հայկ Չոբանյանը համառոտ ներկայացրեց մարզային քաղաքականության և ռազմավարության մեջ համալսարանի դերի վերաբերյալ մարզի ղեկավարության ձևակերպումները և տեսլականը: Կարևորելով հանրակրթությունը և մասնագիտական կրթությունը նա նշեց, որ կրթական հաստատությունները մեր համայքների ամենակարևոր հաստատություններն, իսկ մասնավորապես ԵՊՀ ԻՄ-ը դիտարկվում է, որպես Տավուշի մարզի թիվ մեկ կրթական հաստատություն, որը պետք է ապահովի մարզի տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական բոլոր ոլորտների զարգացումը:

Հայկ Չոբանյանը անդրադարձավ կրթական համակարգի արդի մարտահրավերներին՝ մասնագիտական ճիշտ կողմորոշմանը, սովորողի մոտիվացիային, անհատական ստեղծագործ մոտեցմանը վերաբերող խնդիրներին: Որպես կրթական համակարգի գերխնդիր նա նշեց հակասությունը կրթական ռեսուրսների գլոբալացման և կրթության կազմակերպման կոշտ շրջանակների միջև, որը խոչընդոտում է

նորարությանը և ստեղծագործ մոտեցմանը. «Իմ կարծիքվ՝ համալսարանի խնդիրը, որը պիտի արտացոլված լինի նրա գործունեության ռազմավարության մեջ, նախ և առաջ մեր սերունդների մասնագիտական ճիշտ կողմնորոշումն է: Այն մասնագիտությունները, որոնք ավելի մեծ պահանջարկ ունեն այսօր աշխարհում, ավելի մրցունակ են, ցավոք, դեռևս պահանջարկ չունեն մեր երեխաների և ծնողների մոտ: …Մասնագիտական կրթությունն այլևս համալսարանից չի սկսվում, այն սկսվում է ավելի վաղ տարիքից: Շատ կարևոր է, որ համալսարանի ռազմավարության մեջ արտացոլված լինի հանրակրթություն և համալսարան կապը: Դա ոչ միայն պետք է արտացոլվի հանրակրթական հաստատություններ այցելություններով համալսարանը կամ նույնիսկ մասնագիտությունները ներկայացնելով, այլև դա պետք է ներառված լինի կրթական ծրագրերի, այն դասընթացների մեջ, որոնք իրականացվում են դպրոցներում, դա պետք է արտացոլված լինի համայնքային կյանքում և համայնքային միջոցառումների մեջ:…Կրթական գործընթացի մեջ այսօր չափազանց կարևոր է աշակերտների և ուսանողների մոտիվացիան, ինչպես մոտիվացնել սովորողին, որպեսզի ինքը սովորի… Մենք կրթությունը պիտի զարգացնենք նորարարական, ստեղծագործ և անհատական մոտեցումներով…»:

Մարզպետի ելույթին ի պատասխան՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյանը** առաջարկեց ԵՊՀ ԻՄ-ում կազմակերպել մասնագիտական կրթության հիմնախնդիրների հանրապետական քննարկում՝ բուհերի որակի ապահովման պատասխանատուների և կրթության փորձագետների մասնակցությամբ՝ գտնելու հնարավոր լուծումներ:

<u>Օրակարգի առաջին</u> **՝** « Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ի զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի (2018-2019 ուստարի) մասին տնօրենի հաշվետվություն» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը:

Նա նշեց, 2016-2020թթ. ռազմավարական ծրագրով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն իր համար սահմանել է հատուկ առաքելություն՝ նպաստել հանրապետության հյուսիսարևելյան տարածաշրջանը անհրաժեշտ մասնագետներով համալրելուն և նրա մշակութային կյանքի զարգացմանը: Նշվեց, որ Մասնաճյուղի գործունեության կարևորագույն նպատակներից է որակյալ բարձրագույն կրթություն ապահովելու միջոցով տարածաշրջանում զարգացնել բնական, հումանիտար, սոցիալ-տնտեսական գիտություններն ու մշակույթը: ԵՊՀ ԻՄ-ի Տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը նշեց, որ ռազմավարական պլանով մինչև 2020թթ.-ը մասնաճյուղն իր առջև դրել է 9 կարևորագույն նպատակ՝ 25 խնդիրներով և 141 գործողություններով, որոնց կատարման համար սահմանված են հստակ ժամկետներ, պատասխանատու կառույցներ և անձինք: ԵՊՀ ԻՄ-ի Տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի ելույթը ամբողջությամբ տես հավելված 1-ում:

Արտահայտվեց – ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի անդամ, ԵՊՀ բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր **Ռաֆայել Բարխուդարյանը**՝ մասնավորապես անդրադառնալով համալսարան – ՏՏ ոլորտ կապի զարգացման հնարավորություններին, ԵՊՀ ԻՄ-ում ագրարային ոլորտի կարճաժամկետ ծրագրերի ներդրման, բնագիտական լաբորատորիաների հիմնադրման միջոցով հետազոտական բաղադրիչի ուժեղացմանը, համալսարանում բաց դռների օրեր կազմակերպելու միջոցով դպրոցականներին մասնագիտական կողմնորոշում տալու առավելություններին:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին***

ՈՐՈՇՈՒՄ 42/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 15-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի

կանոնակարգի 4-րդ կետի 15-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրով 2018-2019 ուստարում նախատեսված գործողությունների վերաբերյալ տնօրենի հաշվետվությանը:
2. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2018-2019 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

<u>Օրակարգի երկրորդ՝</u> « Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2019թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին» և ***<u>Օրակարգի երրորդ՝</u>*** « ԵՊՀ ԻՄ-ի 2020թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին» հարցերի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը: Նա նշեց, որ օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ աբողջական հաշվետվություն կլինի առաջիկա գիտական խորհրդում: Նա նշեց, որ 2019թ. -ին մեր բյուջեն եղել է 515 միլիոն դրամ, իսկ 2020թ.-ի բյուջեն 506 միլիոն է՝ ուսանողների թիվը պակասել է մոտ 150-ով: Ա. Մակարյան հավելեց, որ կատարվել է նաև բյուջեի վերաբաշխում, և նշեց մի քանի կարևոր կետեր՝ այս տարի առաջին անգամ ունենալու ենք. բժշկական ապահովագրություն, որի համար հատկացվել է 9 միլիոն դրամ, հետազոտական աշխատանքների համար՝ 2 միլիոն դրամ, ներքին հետազոտական դրամաշնորհ՝ 1 միլիոն դրամ, դասախոսներին տեղափոխելու համար նախատեսվում է ձեռք բերել նոր մեքենա 6 միլիոն դրամ, ինչպես նաև նախատեսվում է աշխատավարձի բարձրացում 10 տոկոսով: Մանրամասն 2020թ.-ի նախահաշիվը կարող եք տեսնել հավելված 2-ում:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին***

Որոշում 42/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 11-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 11-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2020 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծին համաձայն հավելված 2-ի:

Ընթացիկ հարցեր:

4.1 Լսեցին՝ - ԵՊՀ ԻՄ-ի արտաքին շահակիցների 2018-2019թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ Է. Ղարայանի զեկույցը: Զեկույցը ամբողջությամբ տես հավելված 3-ում:

Որոշում 42/3

Ընդունել ի գիտություն:

4.2 Լսեցին՝ - Հաղորդում 2019թ.-ի բակալավրի ընդունելության արդյունքների մասին Ա. Մարգարյանի զեկույցը: Զեկույցը ամբողջությամբ տես հավելված 4-ում:

Որոշում 42/4

Ընդունել ի գիտություն:

4.3 Լսեցին՝ - Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի մասին վերաբերյալ Մ. Աթոյանի հաղորդումը:

Մ. Աթոյանը նշեց, որ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը մասնաճյուղում քննարկվում է 2016թ.-ից, բյուջեում հատկացված 2 միլիոն գումարը հաշվարկվել է ուսումնասիրելով ԵՊՀ ԻՄ-ում վերջին երեք տարիների կատարված հետաղոտական աշխատանքները, կարգը գրվել է առաջնորդվելով ԵՊՀ-ի համապատասխան կարգը, կոնկրետ աշխատանքների համար տրվող գումարները կազմում են ԵՊՀ-ում վճարվող գումարի 2/3 մասը, Մ. Աթոյանը նշեց, որ ներքին դրամաշնորհներին հատկացված 1 միլիոն դրամը ևս ուղղված է ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքները խրախուսելու համար։

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին***

Որոշում 42/5

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը»՝ համաձայն հավելված 5-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2014թ. դեկտեմբերի 25-ի թիվ 7 նիստում հաստատված «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատկիցներին խրախուսելու կարգ սահմանելու մասին» կանոնակարգը

3. Սահմանել, որ սույն որոշմամբ հաստատված կարգի դրույթները տարածվում են 2019թ. սեպտեմբերի 1-ից հետո հրապարակված աշխատանքների վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ